

**ՔՈԱՖ-ի դրամահավաք-երեկոյի այս տարվա արդյունքը.  
6 միլիոն դոլար` ի նպաստ Հայաստանի գյուղական համայնքների**

Մամուլի հաղորդագրություն  
Դեկտեմբերի 25, 2019

Դեկտեմբերի 14-ին Նյու Յորքի հանրահայտ Cipriani սրահում հավաքված ավելի քան 400 հյուրերը եկել էին մասնակցելու «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) 16-րդ դրամահավաք-երեկոյին: Այս տարվա արդյունքը ռեկորդային էր. 6 միլիոն դոլար հավաքվեց 51 գյուղական համայնքներում իրականացվող ծրագրերի, ինչպես նաև Լոռու մարզի Դեբետ գյուղի մոտակայքում կառուցված նորարարական ՍՄԱՐԹ կենտրոնի համար:

Միջոցառումը վարում էր Լուս Անջելեսի FOX 11's Good Day-ի հանրահայտ աստղ Արաքսյա Կարապետյանը: ՔՈԱՖ-ի դրամահավաք-երեկոյի մշտական հաղորդավար, դերասանուհի Անդրեա Մարտինն այս տարի չկարողացավ մասնակցել միջոցառմանը, սակայն տեսաուղերձի միջոցով ողջունեց Արաքսյային և հյուրերին: Արաքսյա Կարապետյանն իր բացման խոսքում պատմեց, որ ծնվել է Գյումրիում, ականատես եղել 1988թ. երկրաշարժին ու մանուկ հասակում ստիպված եղել թողնել հայրենիքն ու տեղափոխվել ԱՄՆ: Նա մտաբերեց երկրաշարժի տարիներին հաջորդած հուսահատությունն ու հնարավորությունների բացակայությունը` նշելով, որ խիստ ուրախ է, որ ՔՈԱՖ-ի նման կազմակերպությունները «գյուղական երիտասարդության համար պատուհաններ են բացում»:

ՔՈԱՖ-ի հիմնադիր Կարո Արմենն էլ խոսեց հայաստանյան ներկայիս իրողությունների մասին` նշելով, որ այժմյան ղեկավարությունն ազնվության ու անկաշառության բարձր չափանիշներ է ստեղծել: Նա նաև խոսեց հայաստանցիների հույսի, եռանդի, փոխադարձ հարգանքի ու սիրո մասին: Կարո Արմենը շեշտեց, որ խիստ կարևոր է բաց չթողնել ոգևորության պահերը` ուժ ու եռանդ ներդնելով և ձգտելով, որ ժամանակակից սերունդը արագորեն ձևավորվող հիմքերի վրա շարունակի կառուցողական աշխատանքը:

Այս տարվա Մարդասիրական մրցանակը հանձնվեց Ջեք և Ջարիկ Յուրեջյաններին: Լուս Անջելեսում բնակվող զույգն իր աջակցությունն էր ցուցաբերել գյուղական համայնքներում

իրականացվող բազմաթիվ նախաձեռնությունների: Յուրեջյանները ոչ միայն հայաստանցիներին են օգնում, այլև Աֆրիկայի ու հարավ-արևելյան Ասիայի չքավորներին ու Լոս Անջելեսի անտուն բնակիչներին: Ջեքը մտաբերեց, որ իր մայրը երկրաշարժից հետո գնացել-ապրում էր Սպիտակում, տնակներում մնացող ընտանիքների հետ: «Կարիքավորներին օգնելն արմատավորված էր իր էության մեջ», - նշեց նա:

Ելույթ ունեցավ Lagani-ի նախկին փոխնախագահ ու Cosmo, Women's Health, Seventeen ամսագրերի հրատարակիչ Դոննա Քալաջյանը, ով այժմ ղեկավարում է Hearst հիմնադրամը: Նա պատմեց, թե ինչպես են իր հայ ծնողները կարևորել ընտանիքի, կրթության գաղափարը ու միշտ օգնել անապահովներին: Դոննան նշեց, որ իր ծնողները միշտ ցանկացել են, որ ինքն ամբողջությամբ զարգացնի իր ներուժը. «ՔՈԱՖ-ն էլ Հայաստանի մանուկների համար նույնն է անում»:

Հանրահայտ դիմահարդար Հրուշ Աճեմյանն էլ իր երախտագիտությունը հայտնեց Միացյալ Նահանգներին՝ իրեն տրամադրված անսահման հնարավորությունների համար: Նա նշեց, որ ՔՈԱՖ-ն էլ հայաստանցի երիտասարդներին է զարգացման հնարավորություններ տվել՝ նպաստելով, որ նոր սերունդը ամբողջությամբ գործածի իր ներուժը:

Երեկոյի ընթացքում ելույթ ունեցան Հայաստանից ժամանած երիտասարդ երաժիշտներ: Տասնյոթամյա ջութակահար Պոլինա Շարաֆյանն իր հզոր կատարումով բացեց երեկոն: Նրան հետևեցին տասնվեցամյա երգչուհի Քրիստինա Ջաքարյանի կոմիտասյան ելևէջները: Լսարանը հնարավորություն ունեցավ իմանալ ՔՈԱՖ-ի թողած ազդեցության մասին՝ լսելով ՔՈԱՖ-ի երկու շահառուների ելույթները:

Տասնութամյա դեբետցի Սաթենի Պետրոսյանն այժմ փոխանակման ծրագրով ուսանում է ԱՄՆ-ի Տեխաս նահանգում: Նա խոսեց այն մասին, թե ինչպես է ՔՈԱՖ-ն անգլերենի դասընթացի միջոցով փոխել իր կյանքը: Նա մտաբերեց, թե ինչպես էր ամեն օր այցելում դեռևս կիսակառույց ՍՄԱՐԹ կենտրոն ու երագում բացման օրվա մասին: Ապա խոսեց լեռնագոգցի Մանուշակ Ավագյանը, որին ոգեշնչել էր ՔՈԱՖ-ում աշխատող բժիշկների օրինակը: Մանկուց շփվելով ՔՈԱՖ-ի աշխատակիցների հետ, ինչպես նաև ոգևորվելով իմունային թերապիայի բնագավառում Կարո Արմենի իրականացրած գործունեությամբ՝ Մանուշակը որոշել է բժիշկ դառնալ: Այժմ նա աշխատում է արյունաբանական կենտրոնում՝ որպես մանկական արյունաբան-ուռուցքաբան:

Երեկոն ավարտվեց աշխարհահռչակ դաշնակահար Տիգրան Համասյանի ու թավջութակահար Արտյոմ Մանուկյանի փայլուն կատարումներով: Նրանց ներկայացրած գործերը համեմված էին և՛ հայկական երաժշտությամբ, և՛ ջազային ավանդույթներով:

Անցկացվեց նաև արվեստի գործերի աճուրդ, որը վարեց հանրահայտ աճուրդավար Գաբրիել Բուտուն: Երեկոյի ընթացում հավաքված ողջ գումարն ուղղվելու է ՔՈԱՖ-ի ենթակառուցվածքային, կրթական, առողջապահական, սոցիալական ու տնտեսական ծրագրերին, ինչպես նաև ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնին:

Հավելյալ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել`

Դավիթ Մանուկյան – ՔՈԱՖ-ի Հաղորդակցության բաժնի ղեկավար

Հեռ.՝ +37493077466

Էլ. փոստ՝ david.manoukian@coaf.org

###

[«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը \(COAF\) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումն սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 51 համայնքների ավելի քան 75,000 բնակիչները:](#)

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ [ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#): ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսին՝ ծառայելու մարզի շուրջ 150 հազար բնակիչներին: